



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԻ ՀԱՇՈՐԴՈՒՄԸ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐԽԻՎԻ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վեհափառ Հայրապետն անցյալ տարի
սլրութեա ուղարկված նմիւրների մի ժամանց:
(Պրոֆ. Ա. Արքահամյանը, ինչպես հայտնի
է, 1951 թվականի մայիսին գտնվել է Ան-
թիլիսոսում որպես Ամենայն Հայոց Հայրա-
պետի պատվիրակության անդամ): Մանրո-
ցում կային հայ երաժշտության պատմու-
թյան համար բացառիկ արժեք ներկայաց-
նող հետեւյալ նյութերը.

Ա) Պ. ՊԱՐԳԵՎ ՊԱՐՍՈՒՄՑԱՆԻ ԿՈՂՄԻՑ,
հրանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Կաթո-
ղիկոսի ցանկության համաձայն, պրոֆ. Ա.
Արքահամյանին հանձնված՝ Կոմիտաս վար-
դապետի հետեւյալ ինքնագիր ստեղծագոր-
ծությունները.

1. Փոլրվդական երգեր, նոտագրուած
հայկական ձայնանիշներով, 236 էջ:

2. Հեքյարի և Մշո շորոր, դաշնամուրի
համար, 18 էջ:

Բ) ԵՐՈՒՍԱԼԵՄԻ Ս. ՀԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔԻ
ԴՊՐԱՊԵՏԾ ՆԵՐՍԵՍ Հ. ԽՈՒՏԱՎԵՐՏՑԱՆԻ
ԿՈՂՄԻՑ 1947 և 1949 թվականներին, նորին
Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսին
ուղարկած հանգուցյալ Կոմիտաս վարդա-
պետի երաժշտական ստեղծագործության
վերաբերյալ 12 նյութեր, Ս. Էջմիածին ու-
ղարկելու համար.

1. Շարական, հին եղանակ, 1905 թ., Ս.
Էջմիածին (տետրակն ունի 140 էջ գրված և
սպիտակ թերթեր):

2. Արևելյան բյուրեական եղանակներ,
140 էջ:

3. Ջայնամարգություն, Ֆրից Ալբերգի,
թարգմանություն Կոմիտաս վարդապետի,
Ս. Էջմիածին, 1904 թ., 64 գրված էջեր:

4. «Նկարագիր երգոց Հայաստանեայց
Եկեղեցոյ», Ն. Մ. Տնտեսյանի, տպագիր,
որի մեջ կան Կոմիտասի նշումները և որի
հետ կազմված է նաև Ն. Շ. Թաշճյանի «Դա-
սագիրք Եկեղեցական ձայնագրուեան Հա-
յոց»:

5. Խազարանություն, բառեր՝ հանված
հին հայկական ձեռագրերից և տպագիր
գրքերից:

6. Անտիպ երգեր, Կոմիտաս վարդապե-
տի, 65 էջ, բնդորինակված բնագրից:

7. Տարրական երաժշտություն, սևագրու-
թյուն, պակասավոր:

8. Տերակ, նշաններ, խազեր և նրանց
նշանակությունը. գրված է սիայն սկզբից
3 էջ:

9. Հոգեոր եղանակներ, 34 էջ, գրվել են
սկզբի 15 էջերը:

10. Խառը նյութեր, որոնց մեջ կան երգե-
րի բառեր, քարոզներ, մանկական խազեր,
հանելուկներ, մանկական դաստիարակու-
թյան խորհրդավոր զրուցներ, խրատներ և
հայոց նշանագրեր:

11. Անզատ թերթերի մի ծրագ, 53 էջ:

12. «Խօրա ըսելով ի՞նչ կը հասկընանք»,
3 պրականոց մի տետրակ:

12#.
12#.

وَمِنْهُمْ مَنْ يَرْجُو أَنْ يُنْهَا نَهَايَةً وَمِنْهُمْ مَنْ يَرْجُو
أَنْ يُنْهَا نَهَايَةً وَمِنْهُمْ مَنْ يَرْجُو أَنْ يُنْهَا نَهَايَةً

2
2

وَمِنْ أَنْتَ مَلِكُ الْأَرْضِ إِنَّكَ مَنْ يَعْلَمُ
وَمِنْ أَنْتَ مَلِكُ الْأَرْضِ إِنَّكَ مَنْ يَعْلَمُ
وَمِنْ أَنْتَ مَلِكُ الْأَرْضِ إِنَّكَ مَنْ يَعْلَمُ

370

Գ) ԲԵՅՐՈՒԹԻ «ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ԱՇԽԱՏԱԿԻՑ Պ. ՍԱՄՎԵԼ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ (ՍԱՄԻ ԿԱՐՈ) ԿՈՂՄԻՑ Հատուկ գրությամբ Ամենայն Հայոց Հայրապետին ուղարկված Կովկասի և Հայաստանի հարյուրամյա բարտեզ, աշխատություն պրոֆ. Կարլ Կոփի:

Դ) ՄԻ ՊԱՏՎԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆԻՑ ՈՒՂԱՐԿԱԾ հարեշերեն մի մագալարյա ձեռագիր:

Ամենայն Հայոց Հայրապետի բարձր ցանկությամբ, վերոհիշյալ նյութերը, պաշտոնական գրությամբ, ուղարկվել են Համապատասխան հաստատությունների: Բատ որում, Ա. և Բ. հատվածների նյութերը, տրոնք վերաբերում են Կոմիտաս վարդապետի երաժշտական ստեղծագործություններին, Վեհա-

փառի հաճությամբ, ուղարկվել են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության սեկտոր, ուր պահպամ է Կոմիտասի արխիվը և որը զբաղվում է Կոմիտասի ստեղծագործությունների ուսումնասիրությամբ և հրատարակությամբ, իսկ Գ. և Դ. հատվածների նույթերը՝ պատմական քարտեզը և հաբեշերեն մագաղաթյա ձեռագիրը, հանձնվել են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական մատենադարանին:

Նշված հաստատությունները, պաշտոնական նամակով, Վեհափառ Հայրապետին անդեկացրել են նյութերի ստացման մասին:

Դ Ի Վ. Ա. Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

